*Նախագիծ*

*Երկրորդ ընթերցում*

***Կ-705-05.08.2020-ՏՏԳԲ-011***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 2-ի հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի 3-րդ մասում «բացառիկ դեպքերում՝ սույն օրենսգրքի 7-րդ հոդվածով սահմանված կարգով:» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված դեպքերում:» բառերով:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Կ-705-05.08.2020-ՏՏԳԲ-011/1*

**Տեղեկանք**

«Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի փոփոխվող հոդվածի վերաբերյալ

*Կ-705-05.08.2020-ՏՏԳԲ-011/1*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 2-ի հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի 3-րդ մասում «բացառիկ դեպքերում՝ սույն օրենսգրքի 7-րդ հոդվածով սահմանված կարգով:» բառերը փոխարինել Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված դեպքերում:«, որոնք սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:» բառերով:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ « ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ- 705-05.08.2020-ՏՏԳՔ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

| № | Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկություն (փոփոխություն, լրացում) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը | Առաջարկությունների ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 1. | ՀՀ կառավարություն | Հոդված 1. | Հաշվի առնելով, որ գյուղատնտեսության և գյուղական համայնքների զարգացմանն ուղղված միջոցառումների արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ է ընդլայնել ներդրումների ներգրավման հնարավորությունները, ուստի առաջարկվում է Նախագծի Հոդված 1-ը խմբագրել հետևյալ բովանդակությամբ.<br>Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 2-ի հողային օրենսգրքի 9-րդ | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | հոդվածի 3-րդ մասում «*բացառիկ դեպքերում* սույն օրենսգրքի 7-րդ հոդվածով սահմանված կարգով:» բառերը փոխարինել «*Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված դեպքերում:*» բառերով: | | |